

ՊԱՅՄԱՆՔ

ՊՈՒԼՎԱՐԻԱ

Տարեկան . . 12 Ձր.
Վեցամսեայ . . 6 "


ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

Ի հիշ թիւ լիկ ծարով
Տարեկան . . 14 Ձր.
Վեցամսեայ . . 7 "

ԱՄԵՐԻԿԱ

Տարեկան 2,60 Տօլար
Վեցամսեայ 1,50 "
Կ Ա Ն Խ Ի Կ

Դրսնոցնսն տողը
20 սանդիւն



Լ Ր Ա Վ Ի Ր

Ա Ջ Գ Ա Յ Ի Ն Ե Ի Գ Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

ԵՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ

Հ Ա Ս Յ Է

Rédaction du journal

„Iravounk“

VARNA (Bulgarie)

Редакция

на вѣстникъ

„Иравункъ“

ВАРНА (България)

Գրութիւնք եւս
չեն տրուիր

Կը խճորուի մեր յարգոյ
բաժանորդներէն որ այլեւս չը յա-
պաղեցնեն իրենց բաժնեգիրները:

ՀԱՅՎԱԿԱՆ ԵՒ ՄԱԿԵՏՈՆԱԿԱՆ
ԽՆԴԻՄՆԵՐԸ

Մակեդոնացւոյց միտքերը այսօր
առաւել քան երբեք գերագրգռեալ
վիճակի մը մէջ է. ի՞նչպէս կերե-
ւայ Շրգայի Ռուս-Պուլկարական
մեծ հանդէսը՝ որ քիչ օր յետոյ
պիտի կատարուի և սլաւոններուն
մտքերը 1876-77 ի Ռուս-Թուրք
պատերազմի օրերուն խանդավա-
ռութեամբը անգամ մը ևս պիտի
հրահրէ ու գրգռէ, կոչուած է
Մակեդոնացի սլաւները ճակատա-
գրական նոր արկածախնդրու-
թեան մը մղել. այդ նշանակալից
օրերուն մէջ բաներ մը պիտի ըլլան
և անպատճառ պիտի ըլլան կըսուի:

Այս «բաներ մը պիտի ըլլան կամ
կըլլան» հաւանականութիւնը Սուլ-
թան Համիտն ալ չափէ դուրս
փութկոտութեան մը մէջ գրած է.
Առջի օր Պուլսէն հեռագիր մը ի-
մացուց թէ սուլթանական նորա-
գոյն իրաւտէ մը հրամայած է նա-
խարարութեանց բարձր պաշտօն-
եաներէն մեծ յանձնախումբ մը
կազմել, որ Մակեդոնիա երթայ
ասկէ առաջ մեծ վեցերի նախա-
գահութեան տակ կազմուած նա-
խարարական գոմիսիօնին գծած
բարենորոգրանց ծրագիրը տեղւոյն
վրայ գործադրելու համար: Մենք
փորձառարար գիտենք թէ միշտ
Սուլթանը հաւանական փոթորիկի
նախընթացին յանկարծ բարենորոգ-
չի հովեր կառնէ, յանձնախումբեր
ու ծրագիրներ կը կազմէ և իր
գեղձը հպատակներուն գոհացում
տալու գիծակ կը գգենու մինչև որ
հաւանական ու մերձակայ փոթո-
րիկին օրերը անցնէ, անկէ յետոյ
կրկին առջի բռնութիւնները ու
վայրենութիւնները անփոփոխ կը
շարունակուին, կազմուած յանձնա-
խումբերու յիշատակութիւնը իսկ
չըլլար և գծուած ծրագիրները
փոշիներու տակ կը թաղուին:

Սակայն այնչափ յաճախակի
կրկնուած թրքական այս խորա-
մանկ խաղերուն այլեւս այն աս-
տիճան վրան բացուած է որ ոչ
Արեւելքիքս անոնց մազի չափ
կը հաւատանք և ոչ Եւրոպացիք:
Մակեդոնական լեղափոխական
ընկերութեանց ներկայացուցիչնե-
րուն Սոփիայի մէջ գումարած
վեցընէ կրկնակ համաժողովները
ցոյց տուին թէ Մակեդոնիոյ սլաւ
տարրը չափէ դուրս գրգռեալ վի-
ճակի մը մէջ է, և վճռական քայլ
մը պիտի առնէ մօտ օրերու մէջ:

Այդ համաժողովներով երեւան
եկած ցաւալի կէտը սա է որ Մի-
խայրովսքիի և Պորիս Սարաֆովի
համախոհները երկու խումբի կը
բաժնուին: Առաջինին պատկանող-
ները որոնց նոր նախագահն է Վո-
րափար Չոլչէօն, Մակեդոնիան Պուլ-
կարիոյ կցելու նպատակակէտը ու-
նին իրենց առջեւ, ինչ որ, գոնէ
ներկայ քաղաքական պարագանե-
րու մէջ, անգործնական կը տես-
նուի, քանի որ այդ չովինական
նպատակին կը հակառակին, թուր-
քէն զատ, Պալքանեան միւս պի-
տութիւններն ալ: Իսկ Սարաֆո-
վին պատկանողները «Մակեդո-
նիան Մակեդոնացւոց համար»
սկզբունքին վրայ կընթանան, կամ
գոնէ իրենց ալիքով ծրագիրը այդ
է. այսինքն ինքնավար Մակեդո-
նիա մը կազմակերպել առանց ազգի
ու կրօնի խտրութեան. այս ծրա-
գիրը առաջիմ էն գործնականն է.
սա ոչ դաշնագիրներու սկզբունք-
քին կը հակառակի և ոչ Պալքանե-
ան միւս պետութեանց թշնամու-
թիւնը կը գրգռէ: Պուլկարիոյ նա-
խարարացեալ այս բաժանումէն
որչափ որ դժգոհ, բայց կը հաւաս-
տուի թէ պառակտումը չը յառաջա-
ցնելու և նոյն իսկ Սերպ լեղափո-
խականաց և կառավարութեան հետ
ալ Պուլկար լեղափոխականները
համաձայնութեան բերելու գերա-
գոյն ճիգեր կընէ. մինչև իսկ
ըսողներ կան թէ նախարարացեալ
Մ. Տանէփի Պելկրատ ճամբորդե-
լու զխաւոր մէկ նպատակը այս
եղած ըլլայ:

Մեծ պետութեանց դեպքանե-
րուն ի Պուլկար վերջին գումարու-
մէն, Սարաֆովի դեպքանաւորան
մէջ, Մակեդոնիոյ և միանգամայն
Հայաստանի ինքիքներուն կը վե-
րագրուին: Կերեւայ թէ Հայաս-
տանի ինչ ինչ կողմերէն հասած
հիւպատոսական տեղեկագրերը և
մեր Պատրիարքարանի ընդ երկար
քննութիւններէն յետոյ ստացած վեր-
ջին բողոքարկուի դիրքը Պետու-
թիւնները մղած են Մակեդոնա-
կան խնդրոյն հետ Հայկականն ալ
ձեռք առնելու: Հայոց խնդրին
վերաբարձրման ահէն Դուռը ինք
զինք պարտաւորուած կը զգայ
Օրմանեանի պատճառաբանեալ հրա-
ժարականին առերեսութ գոհացում
մը տալով խնդիրը գոցելու: Բայց
քաղցր է մեզ յուսալ թէ Հայոց
Պատրիարքարանը գոնէ այս ան-
գամ Դրան կեղծ խոստումներուն
առջեւ համակերպութիւն ցոյց
չը տայ, եթէ ոչ դաւաճանային
քայլ մը առած և ազգին շահերը
թրքական խորամանկութեան ան-
գամ մըն ալ զոհ տուած պիտի ըլ-
լայ: Այս միջոցիս Պուլսոյ մեր
Պատրիարքարանի վարչական ժո-
ղովներուն բռնելիք էն կարճ ճամ-
բան է ազգին վիճակը պարզող
ընդարձակ յիշատակագիր մը հետ
իրենց հրաժարականը դրկել Դրան
ու դեպքաններուն, և քաջուիլ
գործէ:

ԳՈՒՐՈՒՄԵՐ

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ
ԲԱՐԻՉ, 20 Օգոստոս
Լիբանանի խնդիրը
ՊԵՐՈՒԹ, 14 Օգոստոս. —
Էսթ-Ուէսթի յատուկ թղթակ-
ցէն.
Լիբանան լեռը գիտէք թէ տե-
սակ մը անկախութիւն կը վայելէ
Թուրքիոյ մէջ, անոր գերիշխա-
նութեան տակ գտնուելով հան-
դերձ: Սուրիայի մէջ տեղի ունե-
ցած 1860 թուականի կոտորած-
ներէն յետոյ—որ ժամանակ Ալէ-
քիայի դիցազունը՝ Ապտ-էլ-Գա-
տէր, սրանչելի դեր մը կատարեց

մը բռնած է Պաղեստինի և մասնաւորապէս Երուսաղէմի մէջ :

Ո՞վ պիտի լինի Լիբանանու կառավարիչը, ահա այս է մեր քաղաքի և շրջականերու բնակիչներուն տմեկնորեայ հարցումը . ո՞վ :

Արաբական խնդիրը

ԳՕՐՅՈՒ . 15 Օգոստոս . — Էսթ-Ուէսթի յատուկ թղթակցէն .

Սքիւտարի (Շքոտրա) մզկիթնի բէն մէկուն մէջ երկու սառնամանիկ խոզ գտնուելով, Ալպանացի մահ մետականները իրար անցան, որով հետեւ այդ գերագոյն անարգանք մըն էր իրենց կրօնին : Մահմանականները այս բանը իմանալուն պէս միացան տեղացի բանակին հետ և իրենց կրօնական գործը պարզած քույրեցին տեղւոյն կաթոլիկ եպիսկոպոս՝ փէթրովիչի պալատին վրայ, իրենց ոխը անկէ տունելու : Սակայն Ֆրանսայի և Աւստրիոյ հիւպատոսները լսելով Ալպանացի մահմետականներու և զօրքերու այս շարժումը կը դիմեն տեղւոյն կառավարիչ Շաքիր փաշային և կը պահանջեն որ դժբաղդութեանց առջեւ տանէ : Շաքիր փաշա չորս ջոկատներու գլուխն անցած վազեց խժգոնութիւնները և թալանը արգիլելու նպատակով : Սակայն մահմետականները չուզեցին անսալ փաշային խօսքերուն : Ասոր վրայ երկու կողմէն հրացանաձգութիւններն սկսան : Մահմետական Ալպանացիք թուով երկու հազար հինգ հարիւր, ունեցած են մի քանի վիրաւորեալներ : Իսկ Շաքիր փաշայի զօրքերէն մեռած են մի զինուոր և մի ենթասպայ Պէքիր ազա անունով, վիրաւորեալները շատ աւելի են :

Վերջապէս Շաքիր փաշա կորուզացաւ մի քիչ հանդարտութիւն առաջ բերել : Ալպանացի մահմետականները կամաց կամաց սկսան ցրուիլ, առանց սակայն զինաթափ լինելու և սպառնալիքները գաղտնիկու : Այս միջոցիս իբր թէ խաղաղութիւնը վերահաստատուած է և Շաքիր փաշա խոստացաւ այս ապստամբութեան և աքշաւանքին բոլոր հեղինակները որոնել և գրտնել : Իստոյ օրինակելի կերպով պատժելու համար (. . .)

(Թուրքիոյ մէջ (. . .) Ալպանիոյ մէջ . . . պատժելու մահմետականներ . . . և վաճառելու . . .)

Արաբական խնդիրը

Ս. ԲԵՏՐԻՔՈՒՐԿ, 16 Օգոստոս . (Էսթ-Ուէսթի յատուկ թղթակցէն . — Երկար նամակի մը համառօտութիւնը)

Գրեթէ ներկայ տարւոյս սկիզբէն ի վեր Սերպիոյ մէջ թագաւորութեան սերպերը սլաւ ցիղէ են և օրթոտքս . բնական էր որ Ռուսիոյ բարեւերտ ինքնակայր բոյր թուրքոյ մասին, մանաւանդ որ Սերպիան ինչպէս և բոլոր սլավոն օրթոտքս փոքր պիտութիւնները Ռուսիոյ ձեռակերտներն եղած ինքնուրու, քիչ մը ջարդի գերիշխաւ : Նոյնպէս տակ կը գտնուին : Սերպիոյ գիտէք թէ Սերպիոյ Ալեքսանդր Ա. թագաւորին Տրակա թագուհուն հետ տմուռնալէն ի վեր — թագուհին՝ Ալեքսանդրի գրեթէ կրկին տարիքն ունենալուն, ան շուշտ — Սերպիա դեռ թագաւորութեան մը չէ ունեցեր : Զանազան ջանքեր եղան թագաւորին գահա-

ժառանգ մը ընտրել տալու, շատ ջանքեր թափուեցան Ռուս կառավարութեան կողմէն մանաւանդ, Մօնթէնէկոյի Միքքօ իշխանը ընտրել տալու և այս ծրագրին իրագործման համար ջարդար և այլ խոստումներ բրաւ Սերպիոյ թագաւորին, բայց Ալեքսանդր անդրադարձի մնաց . . . Բոլոր այդ բանակցութեանց մասին եւ ժամանակին ձեռք-Ուէսթի գործակալութեան գրեցի և լուր հաղորդեցի պաշտօնական կամ կիսապաշտօնական հրատարակութեան մէջ :

Այժմ կիմանամ թէ դարձեալ Ռուսիան է որ պիտի լուծէ Սերպիոյ խնդիրը : Ստոյգ աղբիւրներ կը լսեմ թէ ջարդի պայմաններուն անստով Ալեքսանդր թագաւոր պատրաստակամութիւն ցոյց կու տայ ռուս մեծ դռքս մը իբր գահաժառանգ ճանչնալ իր գահին, մինչեւ որ ինքը գահակ մը ունենայ :

Այս նպատակով Սերպիոյ թագաւորը մօտ առնէ Ս. Բետրիք-պոսկի պիտի գայ ջարդի հետք բանացի խօսելու : Թագաւորին այստեղ գտնուած միջոցին պիտի որոշուի թէ ո՞ր ուս պատանի մեծ-դռքս Սերպիոյ թագաւորութեան տիրոջ պիտի ընդունի և իրաւունքները վայելէ :

Մելիք Ս. Դաւիթ-Բեկ

ՇՈՒՄԼԱՅԻ ՆՈՐՐԵՏԻ
ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆ

Երէկ քաղաքագետութեան անդամներու ընտրութեան հետ, տեղի ունեցաւ նաեւ տեղւոյ տղա-

յին վարժարաններու հոգաբարձուական ընտրութիւնը : Քուէարկութիւնները կատարուեցան կառավարական պաշտօնատան մէջ և կառավարական կարգերու տրամադրութեանց համաձայն : Չայնիոյ լազարաւակ առաջնորդները, հոգաբարձու ընտրուեցան հետեւեալ հինգ պոռկաւարակաւակ աղագայինները՝ Տեարք, Ալիքսան Մանուկեան, Խաչիկ Մարտիրոսեան, հաճի Միրիճեան հաճի Յովսէփեան, Գրիգոր Աւագեան և Կարապետ հաճի Ստեփանեան : Այս անձնաւորութիւններն ընտրուած են ժողովրդի մեծամասնութեան ձայնով և ազատ ու օրինաւոր քուէարկութեամբ, այնպէս որ միամտութիւն, չրսիւր համար տխմարութիւն, պիտի բլլայ կանխակալ կործինքներ յայտնել անոնց լուր կամ վատ գործունէութեան մասին : Ընդհակառակը ժողովրդին կը մնայ սպասել ու տեսնել իշխող պարտններու գործունէութիւնը ու բաղտոտել հոգաբարձութիւնը տասնեակ տարիներէ ի վեր իրենց մենաշնորհ գործունէութեան հոգաբարձու էֆէնտիներու անպարտութեան հետ . . . որովհետեւ այն առնձնապէս դրական կարծիք մը կարելի պիտի ըլլայ յայտնել Շումլայի նուրբտիր Պոտ . Հոգաբարձութեան կատարութեան մասին : Անձի մը կամ պաշտօնական մարմնի մը համար, գործի սկսելէ առաջ ըստաւաները, լուր կամ վատ, արժէք չեն կրնար ունենալ : այլ անոնք կը մնան միշտ սննդի և վերջի վերջոյ կը դառնան տաղտկալի :

Դադրական

Շումլա, 11 Օգոստոս 1092

Ա. ՇԻՏԱՆԵԱՆ

(6)

ԹԻԱՊԱՐՏԸ

ՄԱՍՆ ԵՐԿՐԻՐԻ

ՏԵՐՎԻՇ...

— Ի՞նչ ընեմ . . . կը ցաւիմ որ ուրիշ կերպով անհնար է ձեր փափաքը կատարել, ըստ Լուսթի աղա : Հիմակ աւելի ախուր տեսարանի մը վրայ պիտի նայիք, որ ձեր հոգին պիտի դառնացնէ :
— Հոգ չէ՛, պարոն թիարաւապետ . . . կը խըղդեմ որ չնեղուիք այդ մասին, առաքիւնց կիւնը :
Լուսթի աղա հրամայեց Ձէքիին որ առաջնորդէ զիրենք :
— Ո՞ր թիւ առանձնարարն պիտի երթանք, հարցուց Ձէքի հետաքրքրութեամբ մը :
— Նախ, Յ թիւ առանձնարարն կուղենք երթալ, պատասխանեց Լուսթի աղա :
Համակրելի պաշտօնեան, առանց ուրիշ հարցում մը ընելու, բացաւ անցքին դուռը և առաջնորդեց զիրենք թիւ 3 առանձնարարն :
Առանձնարարն դուռը փակուած էր :

Ձէքի գրպանէն բանալիներու տրցակ մը հանեց ու դուռը բացաւ :
Ներսը թանձր խաւարի մը մէջ էր :
Լուսթի աղա Ձէքիի ետեւէն անցաւ, որուն հետեւեալ կիւնը՝ գրեթէ անձկութեան խղճուած վիճակով մը :
Երբ Ձէքի քարէ շրջափակով պատուհանը բացաւ, որ գոցուած էր երկաթեայ փեղկով մը, միջնադ լոյս մը պլլաւ առանձնարարն մէջ :
Այդ միջնադ լոյսին մէջ երեւցաւ երկտասարդ մը, որ՝ երկաթէ շղթաներով կաշկանդուած, զարհուրելի գրութեամբ՝ մէկ անկիւնը նետուած էր և կը քնանար :
Խնդհ կիւնը մօտեցաւ :
Ո՛հ, կալանաւորին երեսը նայեցաւ . . . և անոր դիմագծերու մէջ, անոր հոգեկան արտայայտութեան մէջ, մէկ խօսքով՝ անոր ամբողջ նկարագրին մէջ իր սիրտը թրթռացող պատկերացում մը փնտռեց :
Փնտռեց, այո՛ . . . փնտռեց . . .
Ու գտաւ . . .
Այսինքն թէ՛ զգաց իր արեան ա՛յն ուժգին ձգողութիւնը զոր մայրերը միայն կրնան հասկնալ :
— Ա՛հ, Աստուած իմ . . . բաց սգանքեց թշուառ կիւնը՝ ծունկի եկած ու ձեռները իրար կցած : Ա՛ն է, պարոն թիարաւապետ, ա՛ն է . . . ես չեմ սխալիւ . . . իմ սիրտս կը զարնէ . . . իմ հոգիս կը վկայէ . . .
Լուսթի աղա այս աղբիւր տեսարանին վրայ շուտաւ մնաց : Գրեթէ զոգողով մօտեցաւ շղթաներու մէջ քաշկոտուած երկտասարդին, որ քունին

մէջ խորունկ հառաջանքներ կը հանէր, ու երկու անգամ ձայնեց :
— Պոտրի՛կ, Պոտրի՛կ . . .
Կալանաւոր երկտասարդը, որուն Պոտրիկ անուն տուած էր Լուսթի աղա, իսկոյն աչքերը բացաւ ու սարսաղաքին կերպով մը իր նայուածքը նետեց շուրջը գտնուողներու վրայ :
— Զաւա՛կ . . . զաւա՛կ . . . մրմնջեց խեղճ կիւնը՝ զոգողով անոր շղթայակապ ձեռքը բռնելէն ետք :
Ու խղճուած, ջախջախուած, ինքնիմէ ելա՛ծ գրութեան մը մէջ՝ ինկաւ երկտասարդին կուրծքին վրայ :
Երկտասարդը մէկէն իմէկ չկրցաւ պատասխանել : Շարժում մը ըրաւ . . . գերագոյն ձիգ մը բրաւ ինքնիրենը՝ վերջապէս հոգուր խղճուէ ձիւով մը :
— Մա՛յր իմ . . . բացագանջեց :
Լուսթի աղա թողուց որ այդ երկու կարօտակէզ հոգիները փարին իրարու . . . արտասուեն ու իրենց դառնութիւնները թափեն :
Արդարեւ, ա՛յն հուժկու, գաղանաքարոյ կարծուած երկտասարդը ջախջախուած էր այնպիսի վշտի մը ներքեւ, որուն գառնութիւնը չբացատրուի :

(Շարունակելի)

ՅԱՆՅԱՆՔԸ ՈՐՈՒՆ Է

Ա.

ԽԱՉԱԳՈՂԻ ԱՆՅԵԱԼԸ

(Շար. նախորդ քիւնէն)

Շատ անգամ պատահած է և ր. անձնաստացոյցն ու չը պակսիր Լարծեմ. ազնիւ, պարկեշտ, ան- Էնդը և անձնուէր մարդիկներ այն- Էնդ մէջ. ուշափ կը յաջողին վար- ցոյի նման ստանալիք և թշուա- ւակունիքը, և մեր այս բնածին աստացոյցն պիտի տեսնենք քիչ Գերբը:

Տառապեալ և գիւրի ազգերու Կ զստութեան միակ միջոցն Յեղա- փոխութիւնը բլալն արդէն անու- լանալի է: Որչափ որ մեր յշո- ւթութիւնը հեռու տանինք և Երչափ որ ուրիշ ազգերու պատ- մութիւնը կարգաւոր պիտի հա- մադուինք և պիտի տեսնենք թէ, արդ ազգերը Յեղափոխութեամբ և շատուծ են և իրենց այսօրուան անեցած թագաւորութիւն և իշ- քանութիւն այդ Յեղափոխութեան կը պարտին:

Յեղափոխութեամբ ազատուած ազգերու պատմութեան մէջ ալ կը տեսնենք թէ՛ սեւ էջերով կը նկա- րագրուին դաւաճաններու և վա- ւերու պարագաները. բայց ինչ- պէս կառավարութիւններ չարա- քործները և զեղծմարտները կը քատեն և պաշտօնական կընեն, Երչափ ալ ուրիշ ազգեր իրենց ինքսփոխութեան ժամանակ անու- զորք գտնուած են դէպի իրենց Գեղափոխականները որոնք վստ և զգուշիք ընթացք մը ունեցած են:

Մեր Յեղափոխութեան թուա- ցանէն սկսեալ մինչ օրս գրեթէ ասկաւ չեղան մեր մէջ ալ զեղծմա- րտներ և խաչագողներ: Կրնդո- նինք թէ զեղծում տեղի չունենալ անկարելի է, բայց պէտք էր որ Լենք մեր զեղծմարտները անու- չառութեամբ բարոյապէս պատ- ճէինք, զանոնք իրենց պաշտօնին մէջ չը պահէինք. կարենար դեր մը իր յանձնէինք և վերջապէս ուրիշ- անորո օրինակ ըլլալու համար բո- ռորովին արտաքսէինք Յեղափոխա- կան ասպարէզէն:

Այս պարտքը Յեղափոխական կուսակցութեանց վերին մարմին- ներուն վրայ կը ծանրանար. և սա է որ ժողովուրդին առջեւ պատաս- Իանատու կը ճանչցուի: Եւ երբ Ելլէ վերին մարմինը իր պարտքին մէջ կը թերանայ, բնականապէս ժողովուրդն ալ անկէ կը պաղի: Ճանցանքն որո՞ւն է:

Բ.

ՅԵՂԱՓՈՒՄԻՆԻՍՏԱՆ ՄԱԿԱՐԱՅԵՐ
Պատմութի մէջ 1890ին վարդօն

սլքաւորով զինք կրնտէ Հնչակի հիմնադիրներէն և մեր նախկին ընկերներէն Տ. Ռ. Խ. Գիրկը. և ով գիտէ ինչ ստախոսութեամբ, խաբէբայութեամբ և կեղծիքներով վերջապէս կը հաւելէ մեր այդ հե- առտես և լուրջ ընկերը և կը մտնէ Հնչակեան կուսակցութեան մէջ. Քանի որ Հնչակեան կուսակցու- թեան մէջ մտնելէ վերջ վարդօն հերոս. Գիրկը արտաքսուի կը հասնի, մենք պէտք է հոս մտ- սամբ զետեղենք «Երկու Սէր»-ի և «Վարդ Պատրիկովի Յիշատակա- քան»-ի քանի մը կտորները և ցոյց տանք այդ անպատկառ մարդուկի ստախոսութիւնը, խաբէբայութիւնը, կեղծիքը և շարքաբանութիւնը. ո- րովհետեւ այդ ողորմելի արարածը իր այդ երկու հրատարակութեամբ փառաւորուելու երազներ և երեւա- կայութիւններ ունեցած է:

«Երկու Սէր» գրքովին մէջ ե- րեւցող «Վաչիտ» վարդօն է:

1890 Մայիս ամիսն էր Պա- թումի մէջ վաչիտն իր ընկերին այսպէս կըսէ: (Երկու Սէր երես 3), «Հայը իմ աչքում շատ ինկած, «չափից դուրս անբարոյականու- «ցած տարր է, ես չեմ հաւատում «որ նա կը կարողանայ ոգեւորիլ «ու և է բարձր գաղափարով... հայ «և Յեղափոխութիւն... Հայր Լա- «զատութիւն, սեփական հայրե- «նիք ունենալու ծարաւ ունենայ և «գրանց համար արիւն թափէ... «խելքս չէ հասնում եղբայր...»

(Երկու Սէր երես 31), «Թողում էր նաւը և տանում էր վաչիտ- «նին (Պոլիս). այն քիչերից մէ- «կին, որոնք Լաւալու էին այդ «հաստատուն գահի տակ փորել և «հիմքերից կործանել...»

(Երկու Սէր երես 52), «Արդէն «ամիսից աւելի էր որ վաչիտն «գտնուում էր Պոլսում»:

(Երկու Սէր երես 64), «Օգոս- «տոսի սկիզբն էր»:

Երկու Սէրի մէջ վարդօն այն- պէս ցոյց տալ կուզէ ժողովուրդին թէ՛ ինքը Մայիսին Պատմութեան մեկնելով Պոլիս գացած է. և ինչ- պէս կուզէ ցոյց տալ նաեւ որ ինքը Յուլիս 15ի ցոյցին արդէն Պոլիս գտնուած է: Երկու Սէրին մէջ Կրորած այս փառաստանական խո- շոր սուտը մոռնալով, Յիշատակա- րանին մէջ կըսէ. «Հէնց այդ օրը ճանապարհ ընկայ դէպի Պոլիսը Օգոստոսի սկիզբները» (տես Յի. շատակարան Շարժումի թիւ 38): Այսչափ ալ ստախոսութիւն գր- քովի մը մէջ և թէ ժողովուրդին աչքին փոշի փչելու անպատկա- ռութիւն, որ միայն այդ մարդու- կին յատուկ է, իր ուրիշ ստախո- սութիւն և շարլաթաւութիւն պիտի ապացուցանենք իր անմոռանալի «Յիշատակարանով» ալ, այն ատեն ազնիւ ընթերցողը պիտի հարցունէ այդ փճացած մարդուկին թէ, այս շարլաթաւութեան և խաբե- բայութեան պատճառն ի՞նչ է:

(Շարունակելի) 3. Կ. ՃԱՆԿԻՆԵԱՆ

ԴԵՐԱՍՏԱՆԱՊԵՏ Վ. ՊԱՊԱՆԱՆ

«Վէսէլլո» խումբը իր էն կարող գերասանին, Տիար Վ. Պապանանի, ինչպատ շքեղ ներկայացում մը կը պատրաստէ յառաջիկայ հինգ- շարթի իրիկուան համար, Ներ- կայացուելիք խաղն է աշխարհա- հռչակ Ազգաստար Տիւմայի լա- սագոյն արտադրութիւններէն մին ԳԱԹԵՐԻՆ ՀՈՎՈՒԱՐԴ, 7 ա- րարուած:

Պէտք է խոստովանիլ թէ «Վէ- սէլլո»-ն իբր «տաւամբիք» խումբ իր գոյութիւնը, լուրջ և բանիմաց թատերասերներու տեսակետով, Տ. Պապանանի կը պարտի: Խումբին միւս անդամները գերասանական արհեստին մէջ ինչ որ եղած են այդ ալ իրենց վարպետին առաջ- նորդութեանը պարտաւոր են: Վստահ ենք թէ այս ճշմարտու- թիւնը չեն ուրանար Տիկին և Տ. Յակոբեան, Տ. Եփրեմեան և այլն:

Իսկ զաւելցողական խաղերու տե- սակետով Տ. Արշակ Պէնեանն է որ կը վարէ խումբը. բայց զաւել- տը չէ բաւական խումբ մը Պուլ- կարիւր մէջ ապրեցնելու համար. զլիաւորը լուրջ տրամենը յաջող կրնալ խաղալն է. ահա այս տե- սակետով է որ խումբին ոգին կը կազմէ Տ. Պապանանը: Հետեւա- բար հարկ չկայ յանձնարարել զին- քը մեր թատերասէր հասարակու- թեան, որ, աներկբայ ենք թէ, յառաջիկայ հինգշաբթի իրիկուն խումբերամ պիտի դիմէ Պորիս թատերասրահը, ի քաջալերութիւն այդ համակրելի արհեստաւորին:

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Տփղիսէ կը գրեն:

«Թիֆլիսի ոստիկանապետի կար- գադրութեամբ յայտարարուած է թրքահայ այն փախստականներին, որոնք ցարգ ռուսահպատակութիւն չեն ընդունել, որ եթէ մինչեւ Օ- գոստոսի 10ը չը հեռանան թիւր- քիա կամ կամովին ռուսահպատա- թիւն չընդունեն, այն ժամանակ կը գործին մեղաւորների հասարա- կութեան անդամ բռնի կերպով: Ընդամին ոստիկանապետը կար- գադրել է Օգոստոսի 10ին ցու- ցակազմել այդպիսի Հայերին»:

— Ս. Էլմիսճի Սինդը շրջա- բերական հրամանով պատուիրած է Ռուսահայ թեմերու առաջնորդ- ներուն որ քահանաներուն հրա- հանգ տան այսուհետեւ «ապօրինի» բառը չարձանագրել մկրտութեան առթիւ այն նորածին մանկաներու, որոնք ապօրինի յարաբերութեանց արդիւնք են, ալ նշանակել մօր անունով ու մականունով. որովհե- տեւ այդ օրինակ խնդիրներու լու- ծումը դատարանի վճռէ կախում ունի եղեր, ըստ ռուսական օրի- նաց:

— Պոլիս Հայկուհի անունով աղ- ջիկ մը իր հօրը տունէն փախչե- լով Պատրիարքարան ապաստանած է: Որովհետեւ աղջկան խորթ հայրը կուզէ եղբր զանի բաժնել իր նշա- նածէն, և գիշեր մը բռնի ստորա- գրութիւն կառնէ ալիւս իր նշա- նածէն բաժնուելու համար: Հայ- կուհի թէեւ վախէն կը ստորագրէ, բայց հետեւեալ օրը միջոց մը կը գտնէ ինքզինքը Պատրիարքարան ձգելու: Պատաստանական խոր- հուրքը Պատրիարքարան կը հրա- լիրէ նշանածը, որ պատրաստա- կանութիւն ցոյց կուտայ անմիջա- պէս ամուսնանալու: Հետեւեալ օրը պակի արարողութիւնը կը կա- տարուի:

— Երեւանէ կը գրեն թէ Պաքուի անանկութիւնները, դրամական տագնապն և բնիկ նախագործնե- րուն անկումը շատ գէշ կազդեն ամբողջ կովկասի վրայ: Գործերը դադարած են: Վհատութիւն եկած է գործի մարդոց վրայ: Ամէն մարդ խնայողութեան հօգ կը տանի, և բարենպաստակ նուիրատուու- թիւնք պակասած են: Գլխաւոր փա- ստողները Հայերն են, որովհետեւ Պաքուի Պարսկի երկ կանխիկ դրա- մով ծախսեր էին իրենց գործարան- ները: Գործերին աւրուած Հայոց մէկ մասն իբրեւ ստորագաս պաշ- տօնեալ մտած են յաջող ընկերու- թեանց քով, ուրիշներ ալ Եւրոպա գաղթած են նոր գործ փնտռելու:

— Պոլսոյ Պատրիարքարանի կրօն. և քաղաք. ժողովոյ առաջ- նակարգ անդամները, Տ. Գրիգորիս Արքեպիսկոպոս Յովհաննէսեան, Պատր. փոխանորդը, Եւսուսեփեան Տիգրան և խորեան Գրիգոր է- ֆենտիներ, երեքշաբթի օր Դա- տական և Կրօնական գործոց նա- խարար Ապտիւլահման փաշային այցելութիւն տուած են:

— Կիլիկիոյ Կոնստանդնուպոլիսի րնտ- րութեան պատուիրակ Տ. Մովսէս Եպիսկոպոս Օգոստոս 3ին Ատանա հասած է:

— ԿՈՒԽՉՈՒԻ. — Մի ուսուցիչ Սիւրիսէի արական նախակրթա- րանին համար, շրջանաւարտ և վկայեալ աղգուին գիմն գեալէ մը. և մի վայր, քոյց ձաւն, պատուաւոր Կրթչոյն տեղի եկիղեցոյն համար:

Համաձայնութեան համար դիմել չայոց Դպրոց «Կոն. Հոգ բարձու- թեան Սիւրիսէի:

Հոգաբարձութիւն — Տփղիսի թաղ. Խորհուրդը կը խնդրէ մեզմէ ծանուցանել թէ տեղւոյն Ազգ. վարժարանին համար պէտք ունի մէկ ուսուցիչի՝ որ գիտնայ լաւ հայերէն, ֆրանսերէն և երաժշտութիւն, նոյնպէս մէկ վարժուհի՝ որ գիտնայ լաւ ձեւա- գիրութիւն, Գոհացուցիչ ամսա- կան: Դիմելու է տեղւոյն Հոգա- բարձութեան:

Ապօնէիէրիմիդին պիտի թէ-
խի կազմէ թա պէտէլինի կէօնաէրմէ-
լէրի բէճա օլունուր:

ՀԱՎԱՏԻՍԱԹԸ ԲՕԼԻԹԻԳԻՅԷ

Թ Ի Ի Ք Ի Ա

Մ. Ամերիկա թապաւոսը օլուն
միլիթտաշարըմըդտան տօլալը
Պապը Ալի Ամերիկա էլիսինէ
պիտ թազըմ աշըգ չվատարտա
պուլընտր:

Պունտան էվվէլ Սատրազամ
միւսթաճէլ մէշլուլիլիթի պուլըն-
մագ պէհանէսի իլէ էլիլի իլէ կէօ-
րիւմէք իսթէմէտիկի սէպէպլէ
պիտ գաշ կիւն միւնասէպաթարր
գաթ օլընմըլ ըտը. պու տէֆա
էլիլի հուլուրա գապուլ իթմէք
տէն մաստա թէքիթաթընը իճ
բալա սէօզ վերմիշ տիր:

— Տանիշ էֆէնտինին լիբանա
նա բրէնա նասպ օլընմագ թէք
լիթի բէտտ օլընմըլ գապիլիտէն
տիր:

— Էսքի Սերպիտան (Թիւր-
քիա) սըրպ թօքաղընա ֆիրար
իթմիշ օլան խրիսթիանարըն բէ-
վալէթինէ կէօրէ, Սիթրովիցայա
պիտ բուս գօնսօլսը թալիլի օլընա
ճաղընտան տօլալը իսլամ Արնա-
վուտար հիտտէթլէնմիշլէր. վէ
գօնսօլսահանէնին թէսիսինի մէնն
իթմէք իշիւն նիւմայիշաթտա վէ
Էսքի Սերպիտաթի պիւթիւն
խրիսթիանարը գըրմագ թէհտի-
տէնտէ պուլընըլսը ըմըլ:

— Շու սօն կիւնլէրտէ կիւրիտ
սահիլլէրինտէ պուլընան իթալիա
տօնանմասընը գօմանտանը Ակօր
դաք վաբօրը իլէ Սթանպօլա կէ-
լէճէկի կիպի, տիկէր սէֆինէլէր
տախի իղմիր վէ Սէլանիք սուլա
րընա կիտէճէլլէր:

ՏԱԽԻԼԻՅԷ

Վիւքէլա բէյիսի Մ. Տանէվին
Սերպիա բէյիսի Մ. Վուիշ իլէ
մուհիմ մէսէլլէրտէն տօլալը միւ-
լագաթտա պուլընմագ իշիւն Սէր-
պիալա կիտէճէկի մուգարրէր տտտ
օլընըր իքէն, նէ սէպէպլէն իսէ,
պու տէֆա Մ. Տանէվ Բարիսէ կի-
տէր իքէն Սերպիտա տուրմագ
սըզըն կէշմիշ տիր: Պէլքի ալտէ-
թինտէ կէօրիւլէճէք տիր:

— Ալմանիա վէ Աստրիա պէյ-
նինտէ օլտըր կիպի, Պուկարիա
վէ Սերպիա պէյինտէ տախի միւ-
պատէլէ օլընան մէքթուպլար 10
սանթիմիք բուլ իլէ կէօնտէրէ.
պիլմէք իշիւն, Պուկարիա բօս-
թալարընըն միւտրի ումուլիսի
Պէլկրատ իլէ միւլէքէրէտէ պու
լընըլոր:

— Շրգատա իճրա օլընմագ
ուսա-պուլկար զիլէթլէրի միւնա.
սիպէթլէ, պուլկար օրտուսը օրա-
տա բէք միւնթագամ մանէվրալար
իճրա իտէճէկի մուգարրէր օլուպ:

իշթիւրաք իտէճէք ասքէրլէրին մըգ-
տարը շու վէճէլէ կէօթէրիլիօր.
ումուլէն ալթըր ֆորգա պուլը-
նան բիտտէլլէրին իշ ֆորգասը,
պիւթիւն սիւվորիլէր վէ թօքճը.
լարըն 2/3ը, հանի պուլկարիանըն
գուվլէի ասքէրիլէսինին հարրաք
Շրգատա թէճէմիլի օլընմագ տրու:

Պու գտտար տաքէրին իթիւք
սինօրընա հագըն թօքլանըլմասը
Սթանպօլտա բահաթսըլլըգ հասըլ
իթմիշ տիր: Պու սէպէպլէ Սօ-
ֆիատաթի թիւք գօմիսէրի Պապը
Ալիտէն ալտըրը էմը իւզրէ, Պուլ-
կար հիւքիւմէթինէ պիտ իթմար-
նամէ վերմիշ տիր քի՛ էկէր շիմ.
տիքի բրօկրում իւզրէ Շրգատա
մանէվրալար իճրա օլընմագ իսէ՛
թիւքիա տախի քէնտի սինօրընա
ասքէր թէճէմիլի իթմէլէ մէճպուր
օլունագ:

Բ Ո Ւ Ս Ի Ա

Գօրէլա Աուր վէ ֆրանթմու
վիւլլէթլէրինտէ, քէլա Մանչու-
րիտա հանըլմագտա օլտըրը Բէ-
թրպուրկտան պիտիլիլիօր: Հիւ-
քիւմէթ խոթալըլըն էօնիւնիւ
ալմագ իշիւն՝ Սիպիւրիա շրմէնտը-
ֆէր սթասիօնլարընտա իճթիլաթ.
քէարանէ թէտպիլլէր էլէ ալմագ.
տա վէ բէք շօգ նօգտալարտա սըհ
հիլէ տաիլլէրի թէսիս էլլէմէքտէ
տիր:

ԻՆԿԻԼԹԷՐԱ

Իմբէրաթօր վիլհէլմին գրալ
էտուարտա զիյարէթի Նոյեմբըր
Յտա վուգու պուլաճագ ըմըլ. իմ.
բէրաթօրիցա վէ վէլիաճտ տախի
պէրապէր կիտէճէլլէր տիր:

Չ Ի Ն

Հօ-Նան վալիսինտէն ինկիլիզ
հիւքիւմէթինէ պա թէլէկրաֆ վէ-
րիլէն մալիւմաթ իւզրէ, Չան-
Չաու վիլալէթինտէ էհալի՝ «միսիօ
նէլլէր սուլարա զէհիւր տօլտու-
րուպ գօրէլա հասըլ իթմիլլէր» տէ-
լուպ, միսիօնէր տաիլլէրինէ հիւ-
ճիւմէ պինալարը եագմըլ վէ իքի
միսիօնէր վէ պուլարըն մալէ.
թինտէ պուլընան Չինլիլլէրի գաթլ
իթմիշ տիր: Բրէնա Չինլի ինկիլիզ
էլիսինէ պու խուսուստա՝ պէյանը
թէէսիֆլէ միւնթիւմէրի ճէզալա-
մագ թէտպիլլէրտէ պուլընտըլընը
պիլտիրմիշ տիր:

ԱԼՄԱՆԻԱ

Պէրլին թալիւպլառ կալէթաթ
իթալիա գրալընըն Ալմանիալա
կիթմէսի միւնասիպէթլէ թէպրիք
իթմէքլէ տէլօր, «Գրալ հէր նէ
գատար Բուսիալա կիթմէսինտէն
սօնրա Պէրլինէ կէլիօր իսէտէ Ալ-
ման էհալի անը թազիլէ գապուլ
իտէճէք»: «Շիւրհէսիլ շու սըրա
իթալիա վէ Ալմանիա պէյինտէ
միւնասէպաթ բէք սօվուգ պիլ-
հալ քէսպ իթմիշ տիր: Վագաա
իթթիֆագը սիւսէլլէսէ եէնիլլէտի,

ֆագաթ ասքէրիլէ շարթալար օլ-
մագաղըն: Իթալիանըն Ֆրանսալա
վէ Բուսիալա եագլաշմասը բա-
հաթսըլլըգ վէրիօր: Իթալիա
գրալը Էվվէթ Պէրլինէ կէլիօր,
ֆագաթ միլիթլիֆիգ սրֆաթը իլէ
օլմալուպ, հալընըլ պիտ տօսթ
միլլէթին հիւքիւմտար կիպի»:

Թալիւպլառ պու սօվուգլըլը
սէպէպլ Ալմանիանըն մալիլլէճէ
թուլթմըլ օլտըլը բօլիթիգալը
կէօթէրիօր, պաշլըճա կէօմրիւք
թարիֆէսի:

ԲՈՒՄԱՆԻԱ

Բուս տօնանմասընը քէօսթէն-
ճէէ զիյարէթ իթմէսինէ մուգա-
պիլ, Բուսանիա տախի հարպ սէ-
ֆինէլլէրինտէն պիտ ֆիթա թէշ
քիլ իտուպ Սէվաստաբօլա կէօն-
տէրլէճէք տիր: Բուս պահիլլէ
տաիլլէրինտէ բուլլէն ֆիլթասընը
հիւսնի գապուլ իշիւն հագըրլըգ-
լար կէօրիւնիլը իլիլ:

Ֆ Ր Ա Ն Ս Ա

Աճէմ Շահը Ոգոստոս 15տէ
Բարիսէ ելլէթիւպ էլիլլէ-Բալաս
օթլլինէ էնմիշ տիր: 15 կիւն Բա-
րիստէ գալաճագ, վէ պիլ ալիլլէ
Բէթրապուրկա կիտէճէք տիր:

— Ֆրանսա միւսթէմլէքիսթըն-
տան պուլընուպ տէ, պիտ գաշ ալ
էվվէլ խալլը մահէլլէրի խալապ
օլմուշ օլան Մարթինիք առասը-
նըն Բիլլէ եանար տաղը թէքրար
աթլէլլէնուպ, էթրաֆը աթլէլի
թալալը վէ քիլլէր իլէ տօլտուր
մուշ օլտըլընը օլ ճիւլալարտան
կէշէն պիտ վսթօր պիլտիրմիշ տիր:

Ի Թ Ա Ի Ա

Բուստաթի բուս էլիսի Մ. Նէ-
լիտով՝ Չարըն Յուլիարտա Բօմա-
լա կէլէճէկինի բէսմէն գրալ Վիք
թօր Էմմանուէլէ պիլտիրմիշ տիր:
— Գուլ վէ գրալիցա տախի
պու գըլըն՝ Բարիսէ կիտէճէլլէր
տիր:

— Գրալ Էմմանուէլ պու տէֆա
Պէրլինէ կիթթիկի էստատէ, Չուի-
ցերիտաան կէշէր իքէն՝ պիտ հէ-
լէթը մուրախասէ Չուիցերիա
հիւքիւմէթի թարաֆըրտան անը
գարըլլալուպ, պիտ մուլթանթան
զիյալլէթ վէրմիշ տիր: գրալ պու
միւնասիպէթլէ իքի սաաթ եօլճը-
լըլընը թէէլիլ իթմէլէ մէճպուր
օլմուշ:

ԿԸ ՓՆՏՈՒՈՒԻ ԲՆԻԿ ՍԵՐԱՍՏԱ
ցի Ստեֆան Ֆիլէնկէնան անունով
անձը, Ժամանակին ի կ. Պօլիս
Պանգ Օգօմանի օտաճի, յետոյ
Պուրկազէն Եգիպտոս մեկնած: Ով
որ անոր ուր ըլլալը ու հասցէն
գիտէ, կը խնդրուի որ խմբագրու-
թեանս իմաց տայ:

ՏՕՔԹԵՐ ԹՈՐՈՍԵԱՆ

Մասնագէտ ճեղքալիւս գործարա
նազ եւ գաղտնի հիւսնդորդեանց

Երեսուն եւ հինգ տարիներէ ի վեր
արհեստին մէջ ստացած գործնական
փորձառութենէն զատ վերջերս շուրջ
երկու տարի ալ Բարիլ ֆիլալով իր
մասնագիտութիւնը կատարելագործած
է: Վաղեւած ճարտար քիշիկի համբաւը
զինք վստայի հասարակութեան յանձ-
նարարելու պէտք արձգեր:
Կրթական Տիւրիթը Նիքօլայէֆի տու-
նը, Լազարաքա փողոց թիւ 553,
Բ. Թաղ:

Հիւանդ կրնդունի առաւօտները
միայն ժամը 10էն մինչեւ 12:

ՊԱՏՐԱՍՏ ՍՈՒՐԺԻ ԳՈՐԾԱՐԱՆ

"ԱՄԱԶՕՆ"

Բրեսլաւսքա փողոց հրկիզալ

Ապտրահման մզկիթի դիմացը

Ստորագրեալս այսու կուգամ յայտա-
րարել որ հաստատութեանս մէջ մեծ
խնամքով եւ եւրպական կատարելա-
գործեալ մէքէնաներով կը պատրաս-
տուին ամեն ճաշակի յարմարող սուր-
ճի տեսակներ, որք արուեստական ա-
նորակիլի խաղախուրթիւններէ, վեա-
սակար խառնուրդներէ, քրտիքէ եւ
հակառողջական աղտեղութիւններէ
զերծ ըլլալով հանդերձ խիստ գիւրա-
մատչիլի գներով կը վաճառուին:

Հաստատութիւնս այցելողն տեսնե-
լով իմ պատրաստութեան եղանակը եւ
լսելով իմ տալիք բացատրութիւններն
միանգամ ընդ միշտ պիտի համոզուի
որ պատրաստած սուրճերս կը հաւասա-
րին իրենց յատկութիւններով ամե-
նէն նորաճաշակ եւ խնամտ ընտան-
եաց մէջ պատրաստած սուրճերու
մաքրութեան, ինչպէս նաեւ իւրեն-
րու չափաւորութիւնը բաղադրու-
թեան գնելով տուններու մէջ կամ կէս
քիւ սուրճի պատրաստութեան համար
զոհուած յոգնութեանց, ժամանակի
կորուստի եւ ծախուց հետ ամեն ոք
պիտի համոզուի որ հաստատութեանս
գոյութիւնը իրական առաւելութիւն
մը կը ներկայացնէ մաքրութեան
խնայողութեան եւ հանգստութեան
տէսակէտով:

Յ. Թօփալանց

ԱՆՁՆԱՍՊԱՆ ՄԵՌԵԱԼԸ

Ֆրանսայի նշանաւոր վիպասաննե-
րէն Ռընէ տը Բօն-ժէի հեղինակու-
թիւնը եղող, խիստ հետաքրքրաշարժ
եւ բարոյալից վէպին

20^ր Է 21^ր ԹԵՐԹԵՐԸ

Հրատարակուեցան:

Ամրոյշ գիրքը 26 թերթերէ պիտի
բաղկանայ եւ աւարտուի վրայ է:

Վառնայի համար բաժնեկիւն 1 ֆր.:
Ուրիշ քաղաքներու եւ արտասահմա-
նի համար 1.20: Փոսթի ծախքը հրա-
տարակիւն վրայ: Դիմել սա հասցէին՝

Onnik Parseghian
Imprimerie Orientale, Varna
Դրամի փոխադէն նամակագրոյ՝ ալ
կ'ընդունուին:

Ա Զ Դ

Պ. Նիկողոս Բ. Տօրամաճեան Պօլ-
սեցի ազգայինն՝ որ 1896ին վառնա
եկած էր, հասցէն ով որ գիտէ թող
բարեհաճ իմացնել հետեւեալ հասցէին՝

Տ. ՄԻՍԱԿ ՊԻԼԷՉԻՃԵԱՆ
Ֆոն 50 Բ. Օ. Պօս Զիւսըն Մասս
(Մ. Ն. Ամերիկայի)

Одговорникъ Н. Драгулевъ
Печ. на Хр. Н. Войвиковъ—Варна